ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ <<ԱՇՏԱՐԱԿԻ Ն. ՍԻՍԱԿՅԱՆԻ
ԱՆՎԱՆ ԹԻՎ 5 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ
ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Խաչվող հասկացությունները Հովհաննես Թումանյանի ստեղծագործություններում

ՀԵՂԻՆԱԿ՝ Լիզա Սարդարյան

ՂԵԿԱՎԱՐ՝ Կարինե Վահանյան

Աշտարակ 2023

Բովանդակություն

1. Ներածություն ----------3
2. Գլուխ 1. ----------5
3. Գլուխ 2. ----------13
4. Եզրակացություն ----------18
5. Օգտագործված գրականություն ----------19
6. Հավելված ----------20

Մարդ որքան մոտ լինի իր երկրին ու իր ժողովրդին, որքան շատ խորանա ժողովրդական ստեղծագործության մեջ, նա էնքան ավելի մեծ է ու համամարդկային. Էդ ճանապարհին միայն գրողը կարող է ընդհանուր գրականության մեջ տեղ ունենալ:

Հովհաննես Թումանյան

Ներածություն

Յուրաքանչյուր հասարակության զարգացման գլխավոր նախապայմանը կրթությունը և կրթական համակարգն են, որի հիմքը դրվում է դպրոցում՝ հասարակական, սոցիալական փորձի փոխանցման ամենահիմնական օղակում: Կրթական համակարգի արդի խնդիրն է ոչ միայն ապահովել գիտելիքի մեծ պաշար, անձնային զարգացում, այլև սովորողին պատրաստել մրցակցային աշխատաշուկային, կյանքին՝ որպես հասարակության կարողունակ քաղաքացի,ով ունի կայուն արժեհամակարգ: Այսպիսի քաղաքացիներն են ձևավորում գիտակից, պատասխանատու, բարեկեցիկ հասարակություն և ամուր հայրենիք: Հայոց ամենայն բանաստեղծ Հովհաննես Թումանյանի գործունեությունը ուսումնասիրելով՝ հասկանում ես, որ նա եղել է վերը նշված արժեքների կրողը: Նրա ստեղծագործությունները մարդկության պատմության բոլոր ժամանակներում արդիական խնդիրներ են արծարծում:

Հետազոտության թեման՝ Խաչվող հասկացությունները Հովհաննես Թումանյանի ստեղծագործություններում

Թեմայի ընտրության հիմնավորում՝ թեման ընտրվել է, քանի որ Հանրակրթության նոր չափորոշչային առարկայական ծրագրում ներառված են խաչվող հասկացությունները, դրանք առանցքային գաղափարներ են, որոնք ընդհանրական են տարբեր առարկաների համար և օգնում են սովորողին միավորել տարբեր առարկաներից ձեռք բերված գիտելիքները:

Հետազոտության նպատակը՝ ցույց տալ, որ խաչվող հասկացությունները ինչպես են նպաստում գրական տեքստերը ավելի ընդգրկուն վերլուծելուն և դրանց շուրջ քննադատական մտածողություն զարգացնելուն, որ ավելի հանգամանորեն ուսումնասիրեն Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունները

Հետազոտության խնդիրներն են՝

.տեսական և գործնական ինչ մոտեցումներ կան խաչվող հասկացությունների վերաբերյալ

.ինչպես խաչվող հասկացությունները օգտագործել Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունների դասավանդման ժամանակ

Հետազոտության հարց՝ Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունների դասավանդման ժամանակ խաչվող հասկացությունների ապահովումը որքանով է նպաստում գիտելիքների համակարգմանը, քննադատական և ստեղծագործական մտածողության զարգացմանը

Հետազոտության դրույթ՝ սովորողներին օգնել բացահայտելու խաչվող հասկացությունները Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունների բազմակողմանի վերլուծության միջոցով

Վերջնարդյունքը՝ խաչվող հասկացությունները պետք է պատրաստեն սովորողին՝ որպես հասարակության կարողունակ, մեդիագրագետ, փաստերն ու երևույթները վերլուծող ու համադրող քաղաքացու:

Գլուխ 1.

Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ

Աշխարհի ճանաչողության միասնական մեթոդաբանական հիմքերի ապահովման նպատակով առարկայի բովանդակությունը կառուցվում է նաև մի շարք ընդհանրական հասկացությունների հենքի հիման վրա: Դրանք առանցքային հասկացություններ են , որոնք օգնելու են սովորողին միավորելու, փոխկապակցելու տարբեր առարկաներից ձեռք բերած գիտելիքները աշխարհի մասին մեկ ամբողջական պատկերացման շրջանակներում: Առանձնացվում են խաչվող կամ ընդհանրական ութ հասկացություններ.

1. Օրինաչափություն
2. Պատճառ և հետևանք
3. Կառուցվածք և գործառույթ
4. Կայունություն և փոփոխություն
5. Անհատներ և հարաբերություններ
6. Ժամանակ և տարածություն
7. Անհատական և մշակութային արժեհամակարգ
8. Փոփոխություն և զարգացում

1.Օրինաչափություն

Օրինաչափություն նկատվում է բոլոր ոլորտներում, հանդիպում է ամենուր, կանոնավոր կառուցվածքներում, կրկնվող պատահարներում և հարաբերություններում, գիտական և լեզվական համակարգում, մշակույթի ոլորտում: Օրինաչափությունը տեսնելու և ճանաչելու առաջին քայլերից մեկը դասակարգումն է, որն իրականացվում է նմանությունների ու տարբերությունների

բացահայտման արդյունքում: Լեզվի և քերականության մեջ օրինաչափությունը դրսևորվում է նույն կանոնին ենթարկվող բառերի, բառակապակցությունների և նախադասությունների ձևով: Օրինակ՝ օրինաչափություն է, որ **ն, չ** բայածանց ունեցող բայերի այս ածանցներն ընկնում են անցյալ կատարյալի հիմքից կազմված ձևերում: Մարդիկ ունակ են տեսնելու և ցույց տալու օրինաչափությունները: Փոքրերը սկսում են օրինաչափությունները շատ ավելի վաղ:

2.Պատճառ և հետևանք



Պատճառահետևանքային կապերի ուսումնասիրության նպատակներից մեկն այն է, որ սովորողները հետևանքներն ուսումնասիրեն նույնիսկ այն դեպքերում, երբ դրանք դուրս են մարդու վերահսկողությունից: Կարևոր նպատակներից է նաև, որ սովորողները գիտական պատճառահետևանքային կապերը տարբերեն ոչ գիտականից: Ուսումնառության արդյունքում նրանք «ինչպե՞ս, ինչո՞ւ» հարցերից պետք է կարողանան անցնել «Ի՞նչը դարձավ դրա պատճառը, ի՞նչ պայմաններ կային» հարցերի պատասխանները որոնելուն: Բնության մեջ, մարդկանց, ազգերի հարաբերություններում, գեղարվեստական երկերում, արվեստի և երաժշտական ստեղծագործություններում մշտապես կարելի է հանդիպել այս հասկացությանը:

3.Կառուցվածք և գործառույթ

Գործառույթը կարելի է բացատրել կառուցվածքով, իսկ կառուցվածքը կարելի է բացատրել՝ ելնելով գործառույթից: Լեզվական-քերականական, բնական և արհեստական համակարգերի գործունեությունը մասերի փոխադարձ կապերով է պայմանավորված: Կառուցվածքը էական դեր ունի գրական երկի ուսումնասիրության գործընթացում, երբ բացահայտվում է, թե ինչպես է կառուցել հեղինակը իր երկը, մասերից յուրաքանչյուրն ինչ դեր ունի հեղինակի մտքերը, որոշակի հույզեր, զգացումներ տեղ հասցնելու առումով: Ցանկացած տեքստ ունի որոշակի կառուցվածք. աշակերտին ցույց տալով դրա մասերը և ամեն մասի դերը տեքստի կառուցվածքում՝ սրա նմանությամբ նույն հասկացությունները կարելի է ցույց տալ նաև այլ առարկաների ոլորտում:

4.Կայունություն և փոփոխություն

Կայունությունը վիճակ է, որի ժամանակ համակարգի, հասարակարգի, մշակույթի տվյալ երևույթի առկայությունը համեմատաբար անփոփոխ է մնում: Կայունության և փոփոխության քննարկումների նպատակներից մեկը կարող է լինել, թե ինչու է դա փոփոխվում, ինչու դա այդպես չէ: Սովորողները պետք է

հանգեն այն մտքին, որ կայունությունն ու փոփոխությունը կապված են միմյանց հետ և պետք է կարողանան բացատրել այդ կապերը: Այս հասկացությամբ կարելի է ցույց տալ փոփոխությունները բնության մեջ, մարդկության պատմության ընթացքում, գրական կերպարների հոգեբանության մեջ, իրականության արտացոլման զանազան ձևերում: Օրինակ՝ հայերենի լեզվական համակարգը կայուն է, ունի որոշակի օրինաչափություններ, և լեզու սովորելիս մարդն օգտվում է այդ կայուն համակարգից, իսկ փոփոխությունները օգնում են մարդուն վերադառնալու լեզվական համակարգին և գործնականում կիրառել այն:

5.Անհատներ և հարաբերություններ

Այս հասկացությունը քննելիս սովորողը կընկալի, որ մարդկային հասարակությունը կազմված է անհատներից, որոնք պատմության հոլովույթում կարևոր դերակատարություն են ունենում, հաճախ նաև ազդում են դրա զարգացման գործընթացի վրա: Բայց կան նաև միլիոնավոր մարդիկ, որոնք ապրում են Երկիր մոլորակի վրա, աշխատում են, բարիք են ստեղծում: Այս առումով կարևոր է, որ սովորողը հասկանա, թե ո՛վ է ինքը, ինչ դեր ունի այս համայնքում, և ովքեր են մենք-ը: Ինքը այդ ընդհանուրի մեջ ինչ անելիք ու գործառույթ ունի, ինչպես պիտի վերաբերվի ուրիշ մարդկանց: Սովորողը նշանավոր մարդկանց՝ գիտնականներ, գյուտարարներ, ծովագնացներ, օդագնացներ, գրողներ, նկարիչներ, երաժիշտներ և այլք, կենսագրության ուսումնասիրությամբ սովորում է հասկանալ նախ՝ ինքն իրեն, ապա նաև այլ մարդկանց, արժևորել ինքն իրեն, իր զգացումները, ապրումները, միևնույն ժամանակ հասկանալ և արժևորել այլ մարդկանց, նրանց ապրումները, աշխարհայացքը և տեսակետները: Սա հնարավորություն կտա ըմբռնելու, որ հասարակության մեջ ապրող ամեն մարդ անհատականություն է, ունի միայն իրեն հատուկ նկարագիր և առանձնահատկություններ, բայց այս ամենով հանդերձ՝ արժանի է հոգատար վերաբերմունքի, խնամքի և ապրումակցման, որն էլ կհանգեցնի բարոյական նկարագրի ձևավորման և բարեվարքության գիտակցման: Իսկ այս ամենին հետևում են առողջ հարաբերություններ հաստատելու, համագործակցելու կարողությունների ձևավորումը և

զարգացումը, որոնք մարդուն հնարավորություն կտան ճիշտ հաղորդակցվել, որն էլ ապագա բարեկեցության հիմքն է:

6. Ժամանակ և տարածություն

Այս հասկացություններն ուսումնասիրելիս կարևորվում են որտե՞ղ և ե՞րբ հարցերը: Սովորողներն ուսումնասիրում են տարբեր մարդկանց կենցաղը, նրանց անձնական պատմությունները որոշակի ժամանակաշրջանի, վայրի տիրույթում, նրանք սովորում են ուսումնասիրել իրենցից առաջ ապրած մարդկանց կյանքը, պատմական տվյալ ժամանակաշրջանը, նրանց ձեռքբերումները և քաղաքակրթության մեջ ունեցած նշանակալի դերը: Ժամանակի և տարածության ըմբռնումը խիստ կարևոր է գրական երկ, ցանկացած տեքստ ուսումնասիրելիս, քանի որ դրանցում մշտապես առկա են ժամանակի և տարածության հարաբերակցությունը: Ուսումնասիրվում են մարդկության պատմության ընթացքում կրկնվող դեպքեր, որոնք կարող են հանդիպել տարբեր տեղերում և ժամանակներում: Կարևոր է նաև, որ սովորողը ինքնուրույնաբար ուսումնասիրի և ճիշտ ըմբռնի իր ազգի, մարդկության պատմության շրջադարձային կետերը, տվյալ ժամանակաշրջանում կատարված հայտնագործությունները, անհատների և քաղաքակրթության միջև հարաբերությունները, դրանց փոխկապակցումը անձի, ազգի և մարդկության տեսանկյունից:

7. Անհատական և մշակութային արժեհամակարգ

Այս ընդհանրական հասկացության ուսումնասիրության ընթացքում սովորողները փորձում են պատասխանել այն հարցին, թե ինչ է ստեղծարարությունը, որն է դրա դերը, նպատակը կամ ինչ հիմնախնդիրների լուծումներ է առաջարկում ամեն մարդու կյանքի համար: Սովորողները ուսումնասիրում են այն ուղիները, որոնցով մենք աստիճանաբար բացահայտում, ապա նաև արտահայտում ենք գաղափարներ, համոզմունքներ, հասնում ենք որոշակի եզրահանգումների: Ստեղծարարության գաղափարը արմատավորվում և պարուրաձև բարձրանում է դպրոցի բոլոր աստիճաններով ոչ միայն իբրև տեսություն, այլ որպես գործընթաց: Սովորողը բացահայտում է, որ շատ մարդիկ ստեղծում են նաև համագործակցելով, միասին աշխատելով: Սովորողը արժևորում է մշակույթի բարձրարժեք ստեղծագործությունները, գրական երկերը, երկերը, կտավները, երաժշտությունը, կիրառական արվեստի նմուշները, հասկանում դրանց գեղագիտական և բարոյական արժեքը:

8.Փոփոխություն և զարգացում

Այս հասկացությունները կիրառելիս սովորողը պիտի փորձի հասկանալ և պատասխանալ հետևյալ հարցերին, թե ինչ է փոփոխությունը և ինչ է զարգացումը: Բնության երևույթները, տարրերը, մարդու կյանքը հասարակության մեջ

անընդհատ նկատելի և աննկատ փոփոխությունների են ենթարկվում: Մարդը սովորում է ընդունել այդ փոփոխությունները, իսկ ավելի հաճախ՝ օգուտ քաղել դրանցից, փոփոխել և բարելավել ինչպես իր, այնպես էլ համայնքի կյանքը՝ դրանով հիմք դնելով նոր առաջընթացի և հասնելով զարգացման մի նոր աստիճանի: Խաչվող կամ ընդհանրական հասկացությունները հնարավորություն կտան աշակերտին նույն երևույթը հետազոտել տարբեր դիտանկյուններից, ինչպես նաև ըմբռնել աշխարհի միասնականությունը: Ստորև ներկայացնում ենք աղյուսակ, որն ավելի մատչելի կդարձնի հասկացությունների ընկալումը և յուրացումը:

Խաչվող հասկացությունների աղյուսակ

Հասկացություն	Առանձնահատկություն	Նպատակը. Ի՞նչ կարող է զարգացնել	Օրինակ
1.Օրինաչափություն	Կանոնավոր կառույցներում կրկնվող երևույթ	Զարգացնում է վերլուծական մտածողությունը:	Մեղրի փեթակը օրինաչափ կառուցվածք ունի:
2.Պատճառ և հետևանք	Առանց պատճառ չկա հետևանք և հետևանքը միշտ ունենում է պատճառ:	Զարգացնում է քննադատական մտածողությունը:	Մի կաթիլ մեղրը դարձավ պատերազմի պատճառ:
3.Կառուցվածք և գործառույթ	Գործառույթը կարելի է բացատրել կառուցվածքով, իսկ կառուցվածքը ըստ գործառույթի:	Գիտելիքը կիրառել անծանոթ երևույթը բացատրելու համար:	Աշնանը, տերևները չորացած տեսք ու թեթև լինելով, հեշտությամբ թափվում են ծառից:
4.Կայունություն և փոփոխություն	Երբ երևույթը կայուն է, բայց ենթակա է փոփոխության	Կարողանալ բացատրել հետադարձ կապի մեխանիզմը:	Ծառը տարվա տարբեր եղանակներին փոփոխություն է կրում:
5.Անհատներ և հարաբերություններ	Անհատի դերակատարությունը պատմության զարգացման գործում	Սովորողը հասկանա, թե ո՛վէ ինքը, ինչ դեր ունի այս համայնքում, և ովքեր են մենք-ը:	Ես-ը մենք-ի մի մասն է, բայց և անհատ է ու կարող է մեծ դեր ունենալ:
6. Անհատական և մշակութային արժեքահամակար	Ստեղծարարության դերի ու նպատակի գիտակցում	Արժևորել մշակույթի բարձրարժեք	Արվեստը կարևոր առաքելություն

գ		ստեղծագործությունները, հարստացնել իր կյանքը	ունի կյանքում:
7. Ժամանակ և տարածություն	Կարևորվում են որտե՞ղ և ե՞րբ հարցերը:	Ժամանակի և տարածության ըմբռնում	Մարդկության կարևոր առաքելությունն է դից է եղել փոխանցել տարբեր ժամանակների և վայրերի պատմությունը:
8. Փոփոխություն և զարգացում	Երևույթները և կյանքը անընդհատ փոփոխություն և զարգացում է ապրում:	Հասկանալ, որ մարդկության պատմության ընթացքում փոփոխությունները ինչ զարգացում են բերել:	ՏՀՏ միջոցները, մեր կենցաղը փոփոխելով, զարգացման նոր մակարդակ են բերում:

Գլուխ 2.

Խաչվող հասկացությունները Հովհաննես Թումանյանի ստեղծագործություններում

Հովհաննես Թումանյանի ստեղծագործական ժառանգությունը բացառիկ կարևոր տեղ է գրավում հայ բազմադարյան գրականության և ողջ հոգևոր մշակույթի պատմության մեջ: Ինչպես իր գեղարվեստական երկերով, այնպես էլ գրական- քննադատական և հրապարակախոսական գործունեությամբ Թումանյանը XIX դարի վերջի և XX դարի առաջին տասնամյակների հայ գրականության և ամբողջ հասարակական կյանքի խոշորագույն, կենտրոնաձիգ դեմքերից է, որի շուրջն էին համախմբվում հայրենի մշակույթի բոլոր առողջ և առաջադեմ ուժերը:
Նրա ստեղծագործություններն ունեն ոչ միայն համազգային, այլև համամարդկային բովանդակություն, գեղարվեստական վիթխարի ընդհանրացումներ: Թումանյանի թողած գրական ժառանգությունը դարձավ իր հայրենիքի անցյալի ու ներկայի, նրա հոգևոր ուժերի և գեղարվեստական ավանդույթների լավագույն, ամենախոր մարմնավորումը:
Նրա ստեղծագործության ակունքն ու հիմնական ատաղձը եղել են ժողովրդի կողմից հյուսվածը, որն էլ ուսումնասիրման վերառարկայական մոտեցում է պահանջում և նպաստում աշխարհի մասին ամբողջական պատկերացման ձևավորմանը: Խաչվող կամ ընդհանրական հասկացությունները Հանրակրթության նոր չափորոշչային պահանջներով սովորողին ուղղորդում են վերառարկայական ընկալման ձևավորմանն և աշխարհի միասնական ընկալմանը:
Այս ամենը հիմք ընդունելով՝ Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունները, լինելով ժողովրդական կենսափիլիսոփայությունը կրող, կարող են խաչվող կամ ընդհանրական հասկացությունների ուսումնասիրման հարուստ աղբյուր լինել:

Հասկացություն	Ստեղծագործություն	Օրինակ
1.Օրինաչափություն	1.«Ծղրիդ» պատմվածք	1.Ծղրիդի կյանքի պայմանների նկարագրություն՝ **...Ապրում է տաք անկյուններում, սովորաբար բուխարու կողքին կամ վառարանի ետևը, մի որևէ փոքրիկ ճեղքում: Գիշերները իր թաքստոցից դուրս է գալիս, հացի, պանրի և ուրիշ ուտելիքի**

	2. «Գելը» պատմվածք	**փշրանքներ է որոնում, դրանով ապրում** ողջ **տարին...** 2.Գայլերի և շների նմանությունները՝ Գելն էլ կազմված է էնպես, **ինչպես շունը: Գելն էլ շան պես տարին մի անգամ 3—10, բայց սովորաբար 4—6 ձագ է ծնում, ու ինչպես շունն իրեն համար բուն է փորում կամ մի անկյուն է գտնում ու էնտեղ ծնում ու մեծացնում ձագերը, էնպես էլ՝ գելը: Կամ գետնում բուն է փորում, էնտեղ ծնում ու մեծացնում իր ձագերը կամ ընկած ծառի փչակում, կամ մերում, կամ հենց ծմակի խիտ տեղերը, թավուտում:**
2.Պատճառ և հետևանք	1.«Մի կաթիլ մեղր» բալլադ 2.«Թմկաբերդի առումը» պոեմ	1.Պատերազմի սկսելու պառճառը՝ **...Իսկ մնացած մարդիկ իրար** **Հարցնում էին սարսափահար,** **Թե ո՞րտեղից արդյոք ծագեց** **Էս ընդհանուր աղետը մեծ:** 2.Թմկա տիրուհին, գերվելով Շահի աշուղի երգած փառքով և հարստությամբ, դավադրաբար բացում է Թմկա բերդի դարպաս ները:
3.Կառուցվածք և գործառույթ	1.«Ծղրիդ» պատմվածք	1.Ծղրիդի սպիտակ, բարակ թևերի կառուցվածքի հետ է կապված արձակված ձայնը՝ **…Հենց սա է գործիքը, որ թևին քսելով ձեն է հանում**

	2.«Անուշ» պոեմ	**ու նվագում ծղրիդը: Սրա հետ միասին, եթե նվագելիս թևերը բարձրացնում է, ձենը ազատ ու լիահնչյուն տարածվում է…** 2.Պոեմում Մոսու՝ այս նկարագրությունը լիարժեք արտացոլում է նրա՝ մարդասպանի կարգավիճակը՝ **Դեմքը այլայլված, քայլվածքը մոլոր. Սարսափ է կաթում արնոտ աչքերից, Եվ կերպարանքը փոխված է բոլոր:**
4.Կայունություն և փոփոխություն	2.«Անուշ» պոեմ	Պոեմում նկարագրվում է, որ հարսանիքների ժամանակ երիտասարդները կոխ էին բռնվում: Սովորության համաձայն՝ **…Ամբոխի առջև իգիթն իր օրում Գետին չի զարկիլ ընկեր իգիթին…** Սակայն Սարոն խախտում է այս ընդունված կարգը:
5.Անհատներ և հարաբերություններ	Հովհաննեսի Թումանյանի գործունեությունը	Հովհաննեսի Թումանյանի գործունեությունը ուսումնասիրելով՝ արժևորում ես նրան՝ որպես հասարական ակտիվ գործչի. 20-րդ դարի սկզբներին նա մեծ ջանքեր էր թափում Անդրկովկասում ազգամիջյան բախումները դադարեցնելու, 1915թ. Եղեռնից հետո հազարավոր անօթևան գաղթականների կողքին էր:
6. Ժամանակ և	«Սասունցի Դավիթ» պոեմ	Դավթի և Մսրա Մելիքի

տարածություն		մենամարտի ժամանակ Մելիքի գնացած 3 վայրերը՝ Դիարբեքիր, Հալաբ, Մըսր, հայ ժողովրդի պատմության ընթացքում շրջադարձային նշանակության վայրեր են եղել:
7. Անհատական և մշակութային արժեքահամակարգ	«Թմկաբերդի առումը» պոեմ	Պոեմի նախերգանքի թափառական և Շահի ուղարկած աշուղները՝ որպես մշակույթի ստեղծարարներ, արվեստի լեզվով կյանքի ճշմարիտ արժեքներն են ներկայացնում: Օրինակ՝ **Գործն է անմահ, լավ իմացե՛ք,** **Որ խոսվում է դարեդար,** **Երնե՞կ նրան, որ իր գործով** **Կապրի անվերջ, անդադար:**
8.Փոփոխություն և զարգացում	«Սասունցի Դավիթ» պոեմ	Պոեմում նախնիներին ժառանգված մարդասիրությունը, ուղղամտությունը, միամիտությունը, հայրենասիրությունը, քաջությունը առավել ցայտուն են արտահայտված Դավթի կերպարում՝ 1.Վայրի կենդանիներին է խառնում ընտանի կենդանիները: 2.Մարութա վանքը վերակառուցում է ավելի փառավոր: Սասունցի Դավիթն արժևորում է այլ ժողովուրդների իրավունքները,

		խաղաղության հաստատման ջանքերը՝ Դարձե՛ք եկած ճանապարհով, Ձեր հայրենի հողը Մըսրա. Բայց թե մին էլ զենք ու զոռով Վեր եք կացել դուք մեզ վըրա, Հորում լինեն քառսուն գազ խոր Թե ջաղացի քարի տակին,— Կելնեն ձեր դեմ, ինչպես էսօր, Սասմա Դավիթ, Թուր-Կայծակին:

Եզրակացություն

Կատարված ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ խաչվող հասկացությունների միջոցով առարկան քննելիս հնարավորություն է ընձեռնվում նյութը ուսումնասիրել նոր ձևաչափով, համակողմանիորեն՝ գտնելով կապեր իրական կյանքի հետ: Խաչվող կամ ընդհանրական հասկացությունները սովորողներին հնարավորություն կտան նույն երևույթը հետազոտել տարբեր դիտանկյուններից, ինչպես նաև ըմբռնել աշխարհի միասնականությունը, նպաստելու են բացահայտել Հ. Թումանյանի ստեղծագործություններում առկա խորիմաստ ենթատեքստերը, ժողովրդական կենսափիլիսոփայության հետաքրքիր արտահայտությունները:

Խաչվող կամ ընդհանրական հասկացությունների ուսումնասիրությունը կխթանեն, ներառարկայական և միջառարկայական կապերի ապահովումը, մեթոդական ապարատի արդյունավետ կիրառմանը:

Օգտագործված գրականություն

1. https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788

2. https://escs.am/files/files/2020-07-17/f5d8edb53f5cb866aa1772cd373122e2.pdf

3. https://kznakbnagavar.blogspot.com/2022/10/blog-post_28.html

4.Հովհաննես Թումանյան, Հատոր III, Երևան-1969

5. Հովհաննես Թումանյան, Պոեմներ, Երևան-2010

6.Գրականություն-8, Դ. Գասպարյան, Մաս-2, 2021

7. https://i.ytimg.com/vi/30FeaGtXd5U/hqdefault.jpg

8. https://i.ytimg.com/vi/kGyMtvgWDjE/maxresdefault.jpg

Հավելված

Դասի նմուշ-օրինակ

Դասարան	**8-րդ**
Ուսուցիչ(ներ)	Լ. Սարդարյան
Առարկա **Թեմա**	Գրականություն Հովհաննես Թումանյան, «Թմկաբերդի առումը»: Կերպարները
Հիմնական հասկացություն	Հաղորդակցում Ստեղծարարություն Ինքնություն
Ենթահասկացություն	Բանավոր եւ գրավոր հաղորդակցում Ստեղծարարություն Վերաբերմունք
Միջառարկայական կապ	Հայոց լեզու,Պատմություն, Աշխարհագրություն, Ազգային մշակույթ
Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ	**Կառուցվածք և գործառույթ** Գրական երկը տեքստային կառուցվածքով և բովանդակությամբ պոեմի ժանրին է պատկանում **Կայունություն եւ փոփոխություն** Պոեմի հերոսները դեպքերի ընթացքում բնավորության հիմնական հատկանիշների հետ հուզական ինչ փոփոխություններ են ունենում:
Ձեւավորող կարողունակություն	Լեզվական կարողունակություն Ինքնաճանաչության եւ սոցիալական կարողունակություն Մշակութային կարողունակություն Տնտեսական կարողունակություն
Նպատակ	*Առարկայական՝* .ըմբռնել պոեմի դիպաշարը . Ճանաչել հերոսներին . զարգացնել ստեղծարարությունը *Վերաբերմունք՝* հարգալից վերաբերմունք դրսեւորի մայրենիի հանդեպ, ճիշտ եւ գրագետ գործածի
Վերջնարդյունք	.վերտադրի բովանդակությունը .ներկայացնի հերոսներին իրենց արարքներով .կազմի բնութագրական խոսք

Դասի ընթացք **Խթանում** **12ր**	**Քայլ 1.** **Զրույց-** ներկայացնել լուսանկարներ Ջավախքի Թմուկ բերդից Ցուցադրել քարտեզով տեղանքը «Ալմաստ» օպերայից հատվածի ունկնդրում **Քայլ 2.** **Մտածի՛ր, աշխատի՛ր զույգիդ հետ** -դուրս գրել հերոսների գործողությունները պոեմում
Իմաստի ընկալում **12ր**	**Քայլ 3.** **Տ-աձեւ աղյուսակով** ներկայացնել հերոսներին բնութագրող բառակապակցություններով, համեմատել հերոսներին միմյանց հետ
Կշռադատում **15ր**	**Քայլ 4.** 1.Կազմել կապակցված խոսք՝ վերլուծելով հերոսների արարքների բացասական և դրական կողմերը: 2.Փոխել վերջաբանը:
Անդրադարձ **3ր**	Ի՞նչն էր տպավորիչը
Տնային հանձնարարություն **3ր**	Գտնել ընդհանրություններ Հ. Թումանյանի այլ ստեղծագործությունների հետ
Մեթոդներ	**Զրույց, Մտածի՛ր, աշխատի՛ր զույգիդ հետ, ներկայացրու՛ մտքերդ, Տ-ձեւ աղյուսակ**
Պարագաներ	Դասագրքեր, գունավոր գրիչներ, A4 ձեւաչափի թղթեր, պրոյեկտոր, ձայնարկիչ